



Ողջույն ԻՆԴՈՆԵԶԻԱՅԻՑ

Իմացեք Երկնային Հոր
զավակների մասին, որոնք
ապրում են ամբողջ աշխարհում:



Ինդոնեզիան պետություն
է Հարավարևելյան Ասիայում: Այն
ունի ավելի քան 17000 կղզի: Այնտեղ
բնակվում է շուրջ 280 միլիոն մարդ:




ԱՃՈՂ ԵԿԵՂԵՑԻ

2019 թ.-ին նախագահ Ռասսել Մ. Նելսոնն
այցելեց անդամներին մայրաքաղաք
Ջակարտայում: 2023 թվականի ապրիլի
գերագույն համաժողովում նա հայտարարեց,
որ այնտեղ տաճար է կառուցվելու:



ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐ

Ինդոնեզիան ունի ամենամեծ
իսլամական մզկիթը
Հարավարևելյան Ասիայում: Այնտեղ է
գտնվում նաև ամենամեծ Բուդդայական
տաճարն աշխարհում:



ԿԱՊՈՒՅՏ ՀՐԱԲՈՒՄ

Ինդոնեզիան ունի ավելի
շատ գործող հրաբուխներ,
քան որևէ այլ երկիր: Կավահ
Այջեն հրաբուխը կապույտ
բոցեր ունի, որոնք կարելի
է տեսնել գիշերը:



ԴՈՒՔ ԽՈՍՈ՞ՒՄ ԵՔ ԻՄ ԼԵԶՎՈՎ

Selamat
pagi!

Halo!


Rahajeng
semeng!

Ինդոնեզերենը պաշտոնական լեզուն է:
Բայց Ինդոնեզիայում խոսում են ավելի քան
700 լեզուներով: Նրանց երկրի կարգախոսը
նշանակում է՝ «Շատ, սակայն մեկ»՝ ցույց
տալու համար, որ նրանք միասնական են:



ՎԻՇԱՊՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻԸԸ


Կոմոդո վիշապները ամենամեծ
մողեսներն են աշխարհում:
Նրանք կարող են աճել ու
հասնել 3 մ երկարության



ԲԱՏԻԿ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Բատիկը արվեստի մի տեսակ
է, որը գույն է հաղորդում
գործվածքին: Դուք նույնպես
կարող եք անել նման մի բան:
Թղթի վրա հեղուկ սոսնձով նախշ
պատրաստեք: Երբ այն չորանա,
սոսնձի գծերի միջև ներկեք
ջրաներկով:




ՆԱՍԻ ՅՈՒԴՈՒՔ

1. Լվացեք 2 բաժակ սպիտակ
բրինձ: Թրջեք բրինձը ջրով 1 ժամ,
հետո քամեք:
2. Առանձին կաթսայի մեջ լցրեք 2
բաժակ կոկոսի կրեմ: Այնուհետև
ավելացրեք 2 ամբողջական
մեխակ, 1 դարչինի ձողիկ, և
1 թեյի գդալ աղ: Խառնեք և
հասցրեք եռման աստիճանի:
3. Բրինձը ավելացրեք սուուսին:
Ծածկեք կափարիչը և եփեք
15-20 րոպե մինչև բրինձը եփվի:
4. Վերցրեք կրակից և ծածկած
պահեք 10 րոպե : Մատուցեք
պինդ խաշած ձկով, տապակած
տխով կամ այլ լցոններով:

ԵՌՅՈՒՆԵՍԿՈ

Անպայման
դիմեք մեծերի
օգնությանը:



ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼԱՎ ՔՈՒՆ

Մենք կարիք ունենք քնի, որպեսզի
Էներգիա ունենանք վազելու,
խաղալու և աշխատելու համար:
Փորձեք անկողին մտնել ամեն օր
նույն ժամին: Ինչ-որ բան արեք,
որը կօգնի ձեզ հանգստանալ
քնելուց առաջ:

ՕԳՏԱԿԱՐ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ